

մագաղաթս բերելն, սուրբ ստեփաննոսի նախասարկաւագին աղաւթիցն մանակից արասցէ քրիստոս ամէն:»

«Այլ երես անգեալ աղաչեմ զՏանդիպողս սուրբ ատուի ու սուրբ եւ ընդրեալ եղբայրք, Յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զմաթէոս վարդապետն որ ուսուցիչ է մեզ եւ խրատիչ աստուածային սուրբ պատուիրաց: Գարձեալ յիշման արժանի արասցջիք զմեր Տանջիրակ եղբայրքս զզազար արեղայս եւ զստեփաննոս մայրազս եւ զնս զանպիտան գրիչս եւ դուք յիշեալ լինիք ի քրիստոսէ աստուծոյ, մերոյ, որ է աւրՏնեալ յաւիտեանս ամէն:»

Արչափ ուրեմն յարգող էր Ամիրտօվլաթ ազգային նշխարներու եւ որչափ սիրող տոհմային մատենագրական գրուածոց, արդեօք ինչ ընտիր ձեռագիրներ ժողոված էր նա իւր մատենագրանին մէջ, եւ քանիներ արդեօք ընդօրինակել տալով մոռացութենէ դուրս Տանջու պատճառ եղաւ, ինչպէս այս Սաղմոսը, որ անշուշտ պիտի կորսուէր եւ չքանար եթէ ինքը չըլլար անոր պաշտպան եւ հոգածու:

Քրիստոսի 1473 թուականին է որ Ամիրտօվլաթ բախտ կ'ունենայ ձեռք անցունել Գառնեցի վարդապետին սրբագրած Սաղմոսը՝ զոր Սուլթան Մուհամմատ Կ.Պոլիս բերած էր. 1480ին նոյն Սաղմոսէն այս ձեռագիրը ընդօրինակել կու տայ Մարտիրոս Աբեղային, որ Սաղմոսի գրութենէն 6 տարի յետոյ 1479ին գերի բերուած էր Կ.Պոլիս:

Ամիրտօվլաթայ կեանքին նշանաւոր մէկ թուականը համարելու ենք այս 1473 թուականը. այն ատենը, Ամիրտօվլաթ անշուշտ մեծանուն բժիշկ մըն էր արդէն եւ թերեւս ալ Սուլթան Մուհամմատի անձնական բժիշկը՝ որ յաջողեցաւ կորզել անոր ձեռքէն այն Սաղմոսը, զոր նախապէս՝ մեր Արծաթի դարու երեւելի գիտնականներէն, Հաղբատու նշանաւոր վանքի գրիչներէն՝ «սուրբ վարդապետն Յովհաննէս մականուն սարկաւագ քր խաւարէն ի լոյս հանած է, եւ իրմէ ետքն ալ Յովհաննէս Գառնեցին սրբագրած, որպէս կը կարդանք ձեռագրին սկիզբն եղած Յիշատակարանին մէջ:

Աերջգրեալ Յիշատակարանս խօսուն արձան մըն է Ամիրտօվլաթայ ուսումնասիրութեան, անոր գրական եւ գիտական հոգ հմտութեանց՝ որով կրցաւ այն ըլլալ նա մեր ամէնէն ճարտար բժիշկը, մեր ամէնէն շատ գրող բժիշկը եւ

ընձեռել ազգին այն հոյակապ գրուածները, որք դարերով առաջնորդ եղան յետագայ բժիշկներու:

Բաց ի այս Յիշատակարանէն՝ որ կ'աւանդէ նաեւ Ամիրտօվլաթայ քանի մը դաւաններ ունենալը, հատորին ետեւը կը կարդանք՝

«Սաղմոս
ի Զիթ թուոջ՝ գրեցու-
ցեալ ի Ամիրտէվլէթ
բժշկէ»

տողերը՝ որք անգամ մը եւս կը հաստատեն ընդօրինակման թուականը:

Այս Սաղմոսը Ամիրտօվլաթայ սեպհականութիւնն ըլլալէն յետոյ, թերեւս անոր մահուանէն ետքը, ծախուած է Պրուսացի Արաղուս անունով անձի մը, եւ այս կ'իմանանք սա հետեւեալ յիշատակութենէն՝ զոր նոյն ինքն Արաղուս արձանագրած է հատորին վերջն այսպէս.

«Եւ ետոյ առ ի մեղաւոր Արաղուս պր. ամիր տօվլաթ բժշկէն Ե Փլորինի պուրսայ քաղաքն աստուած վայելել տացէ ամն: Աստուած որորմի իր հոգոյն ամէն. Հայր մեղայ:»

Արպէս զի գաղափար մըն ալ բուն Սաղմոսին վրայ ունեցած ըլլանք, կը գրեմ նաեւ ձեռագրին առաջին Յիշատակարանը, զոր յիշեցի վերեւ:

«Երանելոյն Էպիֆանոս Էպիսկոպոսին Արարոցոյ, Յաղաքս Սաղմոսարանի Յառաջաբանութեան տասագեալ» վերնագրով, Չեռագրին սկիզբը գեղեցիկ ջատագովութիւն մը կայ Սաղմոսի երգոց վրայ գրուած, որուն վերջաբանութիւնն է սոյն Յիշատակարանը եւ, է այսպէս.

«Եւ զինչ կա նման սաղմոսի աղերս առ տէր. զի ահա ամենայն կեանք մեր սովաւ աւարտի. թէ խաչ աւրհնիլ. թէ եկեղեցի. թէ ժամահար. թէ նոր գիրք. թէ մեռն. թէ պսակ. թէ մեռելթաղ. թէ տանախմբութիւն. թէ ամենայն քահանայագործութիւն. թէ բովանդակ անարիական բանք անտեսութեան որդոյն աստուծոյ: Եւ ահա պատուի բանք մարգարէին դաւթի ի հրեշտակաց, եւ ի տեառնէն հրեշտակապետաց, նա եւ ամենայն հաւատացեալք ի բերան ունին զայդ նըւագ գիրբեւ զստին դիւրագիկեցուցիչ մաւր ի քիմ սարնդեաց. եւ որ բերան կարէ կանգուն կացուցանել զգովասանութիւն դորին, այլ որ արբ ի սիրոյ